ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2015 թ. հունվարի 14 **N 16-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽՈՐԵՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2014 թվականի փետրվարի 19-ի N 48-Լ հրամանով հաստատված՝ 2014 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացվող տեսչական ստուգումների ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ագարակավան գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ Ագարակավան համայնքի բնակիչ Է. Այվազյանին առք ու վաճառքի պայմանագրով օտարվել է սահմանված 1 հողաբաժնի չափից 0.82 հա պակաս, 0.6692 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր: Խախտվել 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 23^1 կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^9 -րդ և 56^1-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Ագարակավան գյուղական համայնքի ղեկավար Խորեն Կիրակոսյանի նկատմամբ նշանակել տուգանք մեկ հարյուր հիսուն հազար դրամ, որն ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ քան 15 օրվա ընթացքում՝ հ/հ 900005243119:
2. Սույն որոշման պատճեն երեք օրվա ընթացքում հանձնել Ագարակավան համայնքի ղեկավար Խորեն Կիրակոսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ագարակավան համայնքի ղեկավար Խորեն Կիրակոսյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով 10 օրվա ընթացքում:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ